

ՆՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂՄ

(Կ. Մկրտիչյան, Գ. Պեշկոբյուրյան)

Վ. Ա. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

Հայտնի է, որ արևմտահայ գրականության զարգացման հիմնական կենտրոնը եղել է Կոստանդնուպոլիսը: Այնտեղ են ապրել և ստեղծագործել արևմտահայ գրականության շատ նշանավոր ներկայացուցիչներ: Սակայն բուն Արևմտյան Հայաստանում, այսպես ասած՝ դավառում ևս կային գրողներ, գրականությամբ զբաղվող մարդիկ: Գրական աշխույժ կյանքով էին ապրում Վանը, Խարբերդը, Կարինը և ուրիշ քաղաքներ: Բուն Հայաստանում ապրող և ստեղծագործող այդ գրողները ներկայացնում էին, այսպես կոչված, «դավառական գրականությունը», արևմտահայ գյուղագրությունը:

Նպատակ չունենալով անդրադառնալ պոլսահայ և դավառական գրականության շուրջը ծավալված վեճերին, ստորև ցանկանում ենք ներկայացնել երկու բանաստեղծի, որոնց մասին մեր ընթերցողը քիչ գիտե:

1891 թ. 23 տարեկան հասակում թոքախտից մահացավ Խարբերդի Եփրատ կոլեջի ուսուցիչ, բանաստեղծ Դարեգին Պեշկոբյուրյանը:

1892 թ. խուերայի զոհ դարձավ Կարինի Սանասարյան վարժարանի 26-ամյա ուսուցիչ, բանաստեղծ Կորյուն Մկրտիչյանը:

Սերնդակիցներ լինելու և ճակատագրերի նմանության հանգամանքները թելադրեցին նրանց այս փոքրիկ դիմանկարները ներկայացնել միասին:

ԿՈՐՅՈՒՆ ՄԿՐՏԻՉՅԱՆ

Աշնան թռչնած թփերու հետ	Խոր գերեզման մի փորեցին,
Հովը զայն ալ քշեց տարավ,	Լացող չեղավ նորա վրան,
Վաղաթարշամ ծաղիկն անհետ	Սիրո համար ծնած հողին
Սեր չը բուրած անհոտ կորավ:	Անսեր իջավ ի գերեզման:

Այս բանաստեղծությունը գտնվեց նրա բարձի տակ, երբ մահից հետո հավաքում էին երիտասարդ բանաստեղծի անկողինը: Նրա վերջին բանաստեղծությունն էր դա: Կարինի Սանասարյան վարժարանի ուսուցիչներն ու աշակերտները խորապես սգացին սիրված ուսուցչի մահը. «Լացող եղավ նորա վրան»:

«Վաղաթարշամ ծաղկի» հետ համեմատեց իր կյանքը երիտասարդ բանաստեղծը և ամփոփաց ո՛չ թե փառքի ու վայելքի շողովության, այլ անսեր գերեզման իջնելու համար, չէ՞ որ «սիրո համար ծնած» հողի էր նա:

Մահից մի քանի ամիս առաջ գրված «Կտոր մը սեր» բանաստեղծության մեջ Մկրտիչյանը այսպես է բնութագրում իրեն.

Կտոր մը սեր, կ'աղաչեմ,	Ձեր կարծածը բնավ չեմ,
Անսեր չերթամ աշխարհես.	Մի պժգաք դուք թշվառես.

Սիրտ մը ունիմ սիրով լիք,	Կարողանամ ասել սեք՝
Հոգիս տխուր, այլ անմեղ,	«Մահ, շաշե արդ քո կայծակ.
Մտացս մեջ, սիրելիք,	Ես քո դեմքեն չեմ վախնալ,
Ատելություն չունի տեղ:	Սիրով սրտով կմեռնիմ,
Կտոր մը սեր ինձ տվեք,	Ձի սիրեցին, ա՛հ, զիս ալ,
Ա՛ր մինչ մեռնիմ համարձակ՝	Բա՛ց ինձ ծոցդ, ո՛վ շիրիմ»:

Կորյուն Մկրտիչյանը ծնվել է Մուշի Զրարեթ գյուղում, 1866 թ.: Մանկության տարիներն անցել են հայրենի գյուղում, նախնական կրթությունը ստացել է Ս. Կարապետի վանքում: 1879 թ. հորեղբոր հետ նա բռնում է էջմիածնի ճանապարհը: Կորյունն ընդունվեց Բ դասարան: Հիշենք, որ հենց այստեղ նրան անվանեցին Կորյուն (ծնունդով նրա անունը Սարգիս էր):

1886 թ. Կորյունն ավարտում է անարանի դասընթացը, մեկնում է Կարին, այնտեղից Մուշ գնալու համար, սակայն Սանասարյան վարժարանի կառավարչությունը նրան հրավիրում է ուսուցչական աշխատանքի, և Կորյունը մնում է Կարինում: 20-ամյա երիտասարդը սկսում է իր կյանքի նոր շրջանը: Վեց տարի նա աշխատում է որպես ուսուցիչ, տարբեր դաստիարակչությունում դասավանդելով հայոց լեզու և գրականություն: Երիտասարդ ուսուցիչը ամբողջ օրը աշակերտների հետ էր. նրանց հետ լեռներն էր բարձրանում, արշավների, հավաքությունների էր գնում ու դարձավ բոլորի սիրելին:

Եվ հանկարծ՝ խուլերան գամեց նրան անկողնուն: Իրեն խնամող գթության քրոջը հառեց նա իր հայացքը, կյանք պարզևող ժպիտ ու սեր խնդրեց:

Քո այդ սիրաշող գթոտ աչքերեն
Կենաց այս ցուրտին բոցեր կցուլան,
Ո՛վ մայր գթության.
Եվ ես կ'զգամ զայն, կտաքնա հոգիս,
Զմայլմամբ մը անճառ կը պատե ինձ միշտ,
Ծրելով իմ վիշտ:
Ա՛խ, անմայր որդուն, որուն կյանքում զեռ
Չը ծագեց արև, դու ցուլա սիրուն,
Մա՛յր, սիրովդ անհուն:

Մահը վրա հասավ 1892 թ. հոկտեմբերի 29-ին:

Պեշիկթաշլյանի և Դուրյանի արժանավոր շարունակողը կարող էր դառնալ Կորյուն Մկրտիչյանը, եթե ապրեր: Նրա բանաստեղծական կյանքը համընկնում է արևմտահայ կյանքի մի ծանր շրջանի հետ: 1886—1892 թթ. հայտնի են որպես համիդյան խստությունների, ջարդերի, բռնությունների տարիներ: Նախապատրաստվում էին մեծ ջարդերը: Ազգային հալածանքները նոր ծավալ էին ընդունում: Մամուլի, գրականության նկատմամբ համիդյան զրաբնությունը բռնադատորեն խիստ էր: Արգելվում էր այն ամենը, ինչը կարող էր ազգային տրամադրություններ առաջացնել: Իսկա դրանով աետր է բացատրել ետդուրյանական շրջանի արևմտահայ պոեզիայի ցածր մակարդակը:

1880-ական թթ. արևմտահայ բանաստեղծության մեջ Կորյուն Մկրտիչյանի ստեղծագործությունները որոշակի տեղ ունեն: Սակայն շոգոռանանք, որ դրանք լույս տեսան երիտասարդ բանաստեղծի մահից շուրջ չորս տասնյակ տարի հետո, ամերիկահայ մամուլում, Համաստեղի առաջաբանով:

Տպագրության էր ներկայացրել Մկրտիչյանի աշակերտներից մեկը՝ հետա-
դաշում եպիսկոպոս Պալաքյանը, որ ընդօրինակել էր իր ուսուցչի ձեռագիր
գործերը:

Ինչի՞ մասին էր խորհում բանաստեղծ Մկրտիչյանը: Նա կարևոր դեր էր
շատկացնում երգին, գտնելով, որ երգը պիտի ծառայի մարդկանց.

Մուր թևեր ունիս, թռիւր, անդ գնա,
Ուր մարած կրակի դեռ մոխրը կա,
Երգե քո հին երգ:

Երգե ու մարած
Երկնից կրակի մոխրած կայծերուն
Հով շնչե. թող բոցն ելնե ճարճատուն՝
Վերև կամարած:

Երկինքն առ պարզև
Անուշիկ իմ երգ, քեզ է պարզևեր,
Թող բոցը հասնի, փեռեկե ամպեր,
Որ ծագի արև:

Հիշենք համիդյան բռնապետության տարիները, և պարզ կդառնա, թե
ի՞նչ արևի մասին է ակնարկում բանաստեղծը: Ազատության օրվան սպասող
հոգու կանչն էր դա: Հայրենասիրական կրակը նրա մեջ բորբոքվել էր վա-
ղուց, երբ դեռ ճեմարանի սան էր (ճեմարանի 6-րդ դասարանում, ուսուցիչ-
ները նրա սենյակում գտնում են հայրենասիրական ոստանավորներով լի մի
տետր. նա թաքցնում էր ընկերներից): Նալբանդյանի, Պատկանյանի, Շա-
հազիզի պոեզիայից ստացավ նա առաջին խթանումները: Պեշիկթաշլյանի
ու Դուրյանի ազդեցությունն էլ զգալիորեն նկատելի էր:

Պատմական թեմատիկային դիմելու՝ 1860-ական թթ. եկող ավանդույ-
թից հեռու չմնաց նաև Կորյուն Մկրտիչյանը: Նա ստեղծել է մի շարք շափածո
ծավալուն գործեր, մշակել է մի քանի ավանդություններ: Հիշենք՝ «Սչեցի
քաջուհին», որի նյութը վերցրել է թուվմա Մեծոփեցու «Պատմությունից», «Հավ-
լունի թուրը», որի մասին կարգում ենք Գարեգին Սրվանձտյանցի «Համով-
հոտով» ժողովածուի մեջ: Հատկանշական է, որ հատվածներ են մնացել «Սա-
սունցի Դավիթ» էպոսի և «Արա գեղեցիկ» ավանդության՝ Կորյուն Մկրտիչ-
յանի մշակումներից:

Առավել հաջողված է «Հավլունի թուրը» ավանդության մշակումը: Այն
աչքի է ընկնում զարգացման դինամիզմով, անցումների, բնավորություն-
ների տրամաբանվածությունամբ, պատկերավոր լեզվով, շափածո խոսքի մը-
շակվածությամբ.

Քնաթաթախ, արյունքրտինք
Քնեն թռավ Պոռ աքբայն.
«—Մովը ձգեմ, երկինք գետին
Պատճառ կուտա արյան հեղման»:
Դեռ նոր այգը լերանց այտին
Ցող կըցաներ մարգարտաշար
Ու մրշաղով դաշտն ու գետին

Կր համբուրեր նա սիրավառ:
Դեմքն ամպամած ելավ արքայն...
«Թուրը պետք է ձգել տամ ծով,
Թող որդիներս այստեղ շուտ գան»—
Հրաման տվավ կերևեր ձայնով:

Այսպես է սկսվում «Հավիտյանի թուրը»: Խաղաղ, անարյուն ապրելու դա-
շավարն է ընկած ամբողջ պատմության հիմքում: Իսկ վերջում արքայի խոր-
հուրդը որդուն այն է, որ պետք է հավատարիմ լինել հայրենիքին, պաշտ-
պանել իր իրավունքը: Սակայն ինչ որ մեկին պետք է նաև թուրը: Կգա այդ
ներունդը, թուրը նրան բաժին կհասնի, նա էլ ձեռք կբերի ազատությունը:

Հինը կանցնի, կուղա նորը,
Լորին պիտի լինի բաժին,
Պիտի ծագի կենաց օրը
Այն սրտերուն՝ որ կմաշին:

Լոր օրվա, ծագող արևի դաղափարը գտնում ենք նաև մի շարք բանաս-
տեղծություններում: Այստեղ պիտի շեշտենք Մկրտիչյանի պոեզիայի մի
կարևոր արժանիքը՝ սուրյնկտիվ լիրիկայի (անձնական ֆնաբերգության) մեջ
նաստեղծական խնդիրների արժանիքն փաստը:

Վառ վերջալույսի շողերուն դիմաց
Թռչնիկս, ի՞նչ ես նստել ու կերգես,
Սիրածայն, անուշ ու խիստ սրտաբաց,
Ինչո՞ւ թևերդ այդպես կբախես:
Հողիդ կաշկանդող՝ վանդա՞կն է ավաղ
Որ աղի կողբաս վերջալույսիս դեմ,
Թե մայրը մտնող արևն է խաղաղ,
Որ քեզ կհուզե դաժան բախտի դեմ...
...Քո սիրտն էլ արդյոք սրտի՞ս է նման,
Ես հանգիստ չունիմ գիշեր ու ցերեկ
Կը խոկամ տխուր խավար կենաց մեջ՝
Ե՞րբ պիտի ծագե լուսո շող արեգ,
Մինչ ե՞րբ ճրագս այսպես մնա շեջ...

«Լուսո շող արեգի» իր երազանքը բանաստեղծն այստեղ արտահայտել
է վանդակն ընկած թռչնակի հետ անմեղ զրույցի միջոցով, իսկ մեկ այլ բա-
նաստեղծության մեջ այդ նույն տրամադրությունը կապված է արմատից
պոկված ծաղկի պատկերի հետ:

Ձյուներու ծաղիկ, հողմերեն խլված,
Մայրենի անուշ հողեն զրկված,
Ափսոս քեզ, ծաղիկ, պիտի թորշոմիս
Դեռ մեզ կենսավետ գարուն չի բերած:
Ո՞վ դիտե, մեկ ալ, ե՞րբ պիտի ծաղկիս,
Ի՞նչ փարնան արդյոք դու ավետաբեր,
Մեզ ի՞նչ օրերու նշան պիտ լինես,
Մինչ այն օրն արդյոք պիտ ապրի՞մ ես դեռ:

Առավել հաջողված են Մկրտիչյանի սիրային քնարերգության նմուշները: Դուրյանի կողմից կիրառված պատկերավորման այն սկզբունքը, երբ ոչ թե աղջկա ղեղեցկությունն է համեմատվում բնության երևույթների և իրողությունների հետ, այլ դրանք՝ սիրած աղջկա բարեմասնությունների հետ, գտնում ենք նաև Մկրտիչյանի բանաստեղծություններում:

Այն աստղը, որ վերև այնպես,
Կը ցուանար միշտ լուսազես,
Ինչո՞ւ, գիտե՞ս շիջավ հանկարծ.
Որովհետև քո լուսեղեն
Բոցերուդ փայլն հասավ իրեն,
«Այլ կյանք չունիմ, մեռնիմ» — ասաց:

Սիրո հրդեհն է լափում բանաստեղծի սիրտը, և այդ պահին երկինք ու երկիր, ամեն ինչ նրան թվում է հրդեհով բռնված: Վերջալույսի կրակված ամպերն էլ իր սրտի նման են, դա սիրո հրդեհն է: Բանաստեղծություններից հայտնի է դառնում, որ Մկրտիչյանի սերը չճաշակած սերն է, հեռվից հեռու, կարոտ բուրդը սերը: Կարոտի կանչ են այդ սիրո երգերը, առանց փոխադարձության երաշխիքի: Բանաստեղծը երազում է լինել հովիկ՝ սիրածի ականջին իր կարոտը շնչալու համար, լինել թռչուն՝ իր երգով նրա սիրտը շարժելու համար, որովհետև այլևս չի կարող դիմանալ կարոտի հեղեղին:

Սիրտըս կը վառվի կարոտովդ անհուն,
Հեռներ անջրպետ ընկած են մեր մեջ,
Ուր էր. թե հովիկ դառնայի սիրուն,
Շնչեի լանջիդ կարոտս անշեջ:

Իր սիրած էակին, որին սրտի մեջ է պահում, իր երազի աղջկան, որ գուցե իրականում չկա էլ, բանաստեղծը շուրջ պատկերներով է ներկայացնում:

Թե ինձ խոսք կուտաս, քող մը երեսիդ
Քաշել՝ որ ոսկի սիրուն արշալույս
Ձը մթնի հանդեպ երկնային լույսիդ.
Ես քեզ կը բանամ սրտիս փակ դռներ:
Թե ինձ խոսք կուտաս, որ բոցերդ անհուն
Սրտիս պես շայրեն, չմրրկեն զաշխարհ
Եվ ստվեր չածեն արև շողերուն,
Ես քեզ կբանամ սրտիս փակ դռներ.
Իսկ եթե անքող աշխարհին ծագես
Հրեղեն լույսերու ոսկի ճաճանչներ,
Ի դուր, կը սոսկամ, կ'այրես, կը մրրկես,
Ես քեզ սրտիս մեջ միշտ փակ կպահեմ:

Կենսագիրները վկայում են, որ Կորյուն Մկրտիչյանը գրել է նաև արձակ գործեր, որ «Տիգրան և Աժդահակ» անունով վեպ է սկսել ու կիսատ թողել, որ ստեղծել է մի պիես-տրամախոսություն՝ «Հին ու նոր տարին» վերնագրով, որն ամեն ամանորի ներկայացնում էին Սանասարյան վարժարանի աշակերտները:

Մկրտիչյանը շատ լավ տիրուպետում էր գերմաներենին և թարգմանություններ է կատարել Հայնեից, Գյոթեից, Ուլանդից, Շիլլերից։ Հաջողված թարգմանություն է Ուլանգի «Գուսանի անեծքը» (այն հետագայում թարգմանեց Հովհաննես Հովհաննիսյանը՝ «Նրգլի անեծքը» վերնագրով)։

Սանասարյան վարժարանի պատմությունն ուսումնասիրողները չեն կարող մոռանալ, որ երիտասարդ Մկրտիչյանն ստեղծել էր հայոց լեզվի մի հետաքրքիր դասագիրք, գերմաներեն մի դասագրքի նմանությամբ։ Ժամանակակիցները հիշում են նաև, որ նա ծրագրել էր ստեղծել տարբեր դասարանների դասագրքերի մի ամբողջ շարք։

Ծրագրերը, սակայն, կիսատ մնացին... Հայ ազգային կյանքի ծանր պայմանները մոռացնել տվին նաև նրա անունը։ Տարիներ անցան։ Սփյուռքահայ մտավորականները հիշեցին նրան, տպագրեցին։ Բանաստեղծի ձեռագրերը ձեռքից-ձեռք անցան ու անհետացան։ Մկրտիչյանի երկերը առանձին գրքով չտպագրվեցին, սակայն վաղամեռիկ բանաստեղծը պետք է իր համեստ տեղը գտնի 1880—1890-ական թթ. մեր պոեզիայի պատմության մեջ։

ԳԱՐԵԳԻՆ ՊԵՇԿՅՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անցյալ դարի 1880—1890-ական թվականներին անհեռանկարությունը, հուսահատությունը, թախիծն ու տրամոլությունը արևմտահայ պոեզիայի անբաժանելի մասը կազմեցին։ Սակայն այդ ծանր տարիներին էլ երևում են բանաստեղծական առանձին բնկումներ, ճշմարիտ պոեզիայի նմուշներ։

«Գավառի Դուրյան» կոչեցին նրան, խարբերոցի այդ պատանու կյանքի ու գործի մեջ տեսնելով հանճարեղ Դուրյանի կյանքի ու ողբերգության նմանությունը։ Դուրյանի պես նա էլ նվիրված էր պոեզիային, Դուրյանի պես պաշտում էր երգը, Դուրյանի ցավն էր իր ցավը, և այդ ցավից ծնունդ առան կյանքի ու արևի ձգտող, իր կորցրած իդեալը որոնող ու չգտնող մարդու՝ ճշմարիտ թախիծով ողողված երգերը, հուսահատությունն ու զայրույթը։ Ու նույն հիվանդությունը՝ թոքախտը տարավ նաև նրան՝ կյանքի 23-րդ դարնանը։

Նա օժտված էր պոեզիան ու երաժշտությունը ընկալելու և ստեղծագործելու բացառիկ շնորհով, նա ծնվել էր երգի ու երաժշտության համար, կյանքի և սիրո համար, բայց չվայելեց դրանց բերկրանքը։ Բանաստեղծի երևակայությամբ նա հասկանում է, որ սիրող սրտերի, շուրթերի հպումից այնքան ուժգին է հրդեհվում հոգին, որ լռում են բնության բոլոր ձայները, աշխարհը համակ սեր է դառնում։ Այդպիսին էր նրա սիրո երգը.

Երբ խըլրտին տարերք ներքին,
Լերինք իսկույն
Քստմնին դժգույն.

Նվ ի խորոց յուր ընդերքին
Հուր, ժայռեր, կիր
Ժայթրե երկիր,

Երբ խըլրտին տարերք ներքին:
Բսկ բորբոքեն երբ սիրո կիրք:

Կարծես դադրին
Քստմունք երկրին,
Լերինք առնուն և անշարժ դիրք
Այնքան ուժգին
Հուզվի հոգին,
Ահ, բորբոքեն երբ սիրո կիրք՝

Գաբրիել Պեշկոթյուրյանը ծնվել է 1868 թ., հարբերդում, ուսուցիչ Գև-վորդ Պեշկոթյուրյանի ընտանիքում։ Ծնողները վաղ հեռացան կյանքից, և Գաբրիելին խնամեց պապը։ Ապագա բանաստեղծը սովորում է հարբերդի հայտնի Եփրատ կոլեջում և ավարտում այն փայլուն զնահատականներով, ստանալով «բացառիկ վկայական»։ Մի սլահ որոշում է գնալ արտասահման՝ բարձրագույն կրթություն ստանալու, հետևելու «աստվածաբանական դաս-րնթացքներուն», սակայն հրավեր է ստանում կոլեջի ղեկավարությունից և 1887 թ. աշխատանքի է նշանակվում հենց նույն կոլեջում, որպես անգլերե-նի և երաժշտության ուսուցիչ։ Այստեղ է աշխատում նա մինչև իր մահը՝ 1891 թ. հունիս ամիսը։

Ահա և կյանքի ողջ պատմությունը։ Ավելացնենք նաև, որ նա այդ տա-րիներին խմբագրում և հրատարակում է «Ասպարեզ» անունով խմորատիպ ամսաթերթ, որն ուներ շեշտված հայրենասիրական ուղղություն, շնայած այդ օրերի ազգային հալածանքներին ու ճնշումներին։

Պոեզիան, երաժշտությունը, բարոյագիտությունը ոգևորում են պատա-նի Գաբրիելին, և նա սկսում է տարվել արվեստով, ընթերցանությամբ, նո-րովի է հասկանում կյանքն ու աշխարհը։ Բնության ու մարդկային կյանքի օրենքները բորբոքում են նրա միտքը, և նա ջանում է հասկանալ ու ըմբռնել դրանք։ Կոլեջի բարձր դասարանների աշակերտության ու ուսուցիչների հա-մար նա կարգում է գիտական դասախոսություններ, որոնցից երեքը վեր-նագրված էին՝ «Բնության օրենք», «Մարդկության օրենք», «Մարդը»։ Այդ դասախոսությունների մեջ Պեշկոթյուրյանը բնության ու մարդկային օ-րենքները քննում է, իհարկե, քրիստոնեական դիրքերից, սակայն հետաքրք-րականն այն է, որ նա մարդուն բնութագրում է որպես «էակ ազատակամ և պատասխանասու»։ Ուրեմն մարդը պատասխանատու է իր արարքների համար, կյանքը շապկանելու, բնությունը շաղավաղելու համար²։ Բնու-թյունն ունի իր կայուն օրենքները։ Մարդիկ էլ պետք է ունենան իրենց բարոյական օրենքները, ասում էր Պեշկոթյուրյանը։ Ուրեմն ամբողջ մի-տումը մարդկային կյանքի կատարելության ձգտումն էր։

Այսքանն է մեզ հայտնի նրա կյանքի մասին և մեկ էլ այն, որ Գաբրի-ելին Պեշկոթյուրյանը անշափ սիրված անձ էր իր շրջապատում և բացառիկ հարգանքի արժանացած։ «Միշտ տեսակ մը հիացում կար՝ ըղձանքի հետ խառնված՝ ամենուն բերանը, և թե երբեք իր նկատմամբ խոսք մը դառնար խմբակի մը մեջ...», — գրում էր Ռ. Զարդարյանը³։ Բանաստեղծություն և ե-րաժշտություն. այս երկու արվեստների ամենանուրբ զգացողությամբ էր լցված նա և, ժամանակակիցների վկայությամբ, ինքն էլ չգիտեր, թե որին է ղերապատվություն տալիս։ Հրաշալի էր նվագում։ «Իր ճարտար ու դյուրա-

¹ «Մաղիկ», Կ. Պոլիս, 1905, էջ 248։

² Տե՛ս «Անդաստան», Փարիզ, 1960, № 18, էջ 20։

³ «Մասիս», Կ. Պոլիս, 1892, էջ 200։

շարժ մատները հմայքով մը, դյուրութեամբ մը մերթ երգեհոնը գեղջուկ հով-
վուհիի մը կը փոխարկէին, որ արեւելյան ամենէն սրտաճմլիկ շեշտերով իր
սիրեկանին մահը կը վայել, և մերթ խորունկ փողի մը, որ քայլերս մը կը
հնչեր»⁴, — հիշում է նրա ընկերներից մեկը:

Նրա բանաստեղծութիւններից քիչ է այսօր մեզ հայտնի: Գուցե և քիչ է
դրել, գուցե և քիչ է տպագրւել, բայց մեզ հայտնի մի քանիսն էլ բավական
են, որ ճանաչենք նրա զգայուն ու զգացող հոգին, բանաստեղծական տա-
ղանդը: Ու եթե նրա կերպարը կամա թե ակամա ժամանակը պիտի մշտնջու-
բայց նրա բանաստեղծութիւններից գեթ մեկը՝ հայտնի «Սրինգը» (ինչպես
Իողոխյանի հանրահայտ «Ծիծեռնակը»), հնչեց երկար տարիներ, դարձավ
արժանի՝ դասագրքերի ու հատընտիրների մեջ մնալու, դարձավ երգ:

«Սրինգը» Պեշկոթյուրյանի սերնդի հոգու պատմութիւնն է, հետեւեալ
և բանաստեղծի կյանքի պատմութիւնը.

Եկ, իմ սրինգ, իմ բարեկամ սրտագին,
Նիհար շրթներդ, օհ, երբուն,
Դիր դալկահար իմ շրթներուն՝
Երգենք ու լանք, լանք ու երգենք միասին:

Այսպես է սկսւում «Սրինգ» բանաստեղծութիւնը, որը շնաչափ բավա-
նականաչափ երկար լինելուն, աչքի է ընկնում ապրումի և զգացումի տրամա-
բանական ներդաշնակութեամբ:

Ինչու է բանաստեղծն իրեն ընկեր ընտրում սրինգը, ի՞նչ ընդհանրու-
թիւն կա նրանց մեջ և ի՞նչ է իր համար սրինգը. այս հարցերին է պա-
տասխանում նա բանաստեղծութեան երեք մասերում, որոնք ավարտուն կտոր-
ներ են, բայց և լրացնում են մեկը մյուսին, որպէս ապրումի զարգացման
լնթացք:

Ինչպես Դուրյանը՝ «Լճակին», Պեշկոթյուրյանն էլ դիմում է սրինգին.
պարզապէս բանաստեղծական հարմար ձև ընտրում՝ մտերմիկ շեշտերով իր
կյանքի դառն պատմութիւնն անելու:

Բանաստեղծի պատմութիւնն ինչ որ ձևով նման է սրինգի պատմու-
թեանը: Եվ բանաստեղծն իր երկի երկրորդ մասում անում է նաև այդ պատ-
մութիւնը՝ դուգահեռներ անցկացնելու, իր վշտերը շեշտելու, բողոքելու հա-
մար: Ու ոչ միայն ճակատագրի դառնութիւնն է վշտացրել բանաստեղծին.
այլև ժամանակի բռնութիւնը, որ ստիպում է մարդուն կեղծել, լռել, համբե-
րել, որ ստիպում է «իր էութիւն բռնի գիտնալ» և, վերջապէս, այն ողբեր-
գութիւնը, որ շհասկացված անգամ բարեկամի կողմից, պիտի սնա «ի թագ
հոգ».

Հավատա ինձ, բարեկամդ իմ, թե իմ կեան

Ձէ ինչ տարբեր ի քույդ երբեք.

Ես ալ հաճախ կամ հուսաբեկ

Եվ դռնմ.— է՞ր ծնա երկրի մի անկեան:

Ուր որ դառնամ ճակատադիրս որ է լոկ

Տգիտութեան ծպտեալ մի բառն,

Ծագ ու ծիծաղ արձակե դառն

Եվ շանթահար տնհետե զիմ խոհ և խոկ:

⁴ «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1904, էջ 392:

Ահ, գուցե դուն ստիպեալ չես ինձ նման
Քո էությունն բռնի գիտնալ,
Զի ես պարտիմ անշուշտ հաւտալ
Թե ինչ է մարդ և զլիսալոր յուր վախճան:

Գեթ մին լիներ սրտի վերքերն հասկացող,
Իմ ամենեն սերտ բարեկամը
Չ'ըմբռնեցին իմ հույզ ու կամք
Վախնամ այսպես անոք գնամ ի թաց հող:

Դու գեթ, սրինգ, իմ բարեկամ մտերիմ,
Նիհար շրթներ քո երերուն
Դիր դալկահար իմ շուրթերուն՝
Լաց ու երգե, տանիմ քեզ հետս ի շիրիմ:

Եվ նրանք կյանքերի զուգագիսյությունն ու հակադրությունը խոր ու տխրագին շեշտեր և ընդունում բանաստեղծության վերջնամասում: Բայց որքան էլ ներանձնանա բանաստեղծը, նա հասարակության մեկ անդամն է և իր վշտից բացի ունի հայրենական ու հասարակական մտահոգություն, որ ասիպում է նրան «զննել, զգալ, զարմանալ և խոկալ», քանի որ մարդ է նա և «անհուն կամաց մը մեջ թաղած է» իր կյանքը, և որպես մարդ, պարտավոր է խորհել մարդու մասին.

...Եվ քանի որ նույնն է ծնունդ մեր և կյանք,
— Մարդուն քմաց դուն հպատակ,
Եվ անծանոթ մի նպատակ
Անհուն կամաց մը մեջ թաղած է իմ կյանք,—
Ինչու նույն հողն շամփոփե մեզ, իմ սրինգ,
Զէ որ սիրող սրտից կրկին
Նույնն են դժողք և նույն երկին,
Հիշե, ընդ քեզ ապրիլ՝ մեռնիլ ուխտ ըրինք:
Թող երգեհոն, դաշնակ, քնար գեղգեղեն,
Յ'եկեղեցվոջ, ի գինետան
Աղոթք ու պար թռչին, խայտան
Թող այլք վայլեն հաճույք մարմնո, հոգեղեն,
Ա՛խ, իմ սրինգ, աշխարհ հույսով թող բերկրի,
Թեղ բախտն անոր ժպտի հույսին,
Եկ, ես ու դու ի միասին
Լանք ու երգենք, մեր բաժինն այս է յերկրի...

Բանաստեղծի անձնական վիշտն այստեղ վերաճում է կյանքի ու արևի ձգտող, իր կորցրած իդեալը որոնող ու շատնող անհատի հասարակական վըշտի, և բանաստեղծության արժեքը ավելի է բարձրանում:

Բանաստեղծական կառույցի տեսակետից էլ «Սրինգը» վարպետ գրչի գործ է: Չնայած երկարաշունչ լինելուն, բանաստեղծության տարբեր մասերը շաղկապվում են կրկնվող քառյակներով (որ ամեն անգամ նոր երանգ են ստանում), և մտերմիկ ղրույցի ձև ստացած այս ներքին մենախոսությունը

հնչում է անկեղծ ու տրամադրող: Ընթացքը բանաստեղծական է, հնչուն հանգերով, երաժշտական ու սահուն, «հեզասահ, մեղմիկ, ձորակի մը խորր թաքուն դրդչող առվակի մը պես, որին անցքին վրա խութեր ու ժայռեր չի կան»⁵:

«Սրինգի» համար, երաժշտություն գրեց ինքը՝ բանաստեղծը, և այն դարձավ ոչ միայն սիրված բանաստեղծություն, այլև սիրված երգ:

Սաստկացող հիվանդությունը և մոտալուտ մահվան տեսիլը առավել հուսահատեցնում են բանաստեղծին, և նա գրում է տխուր շեշտերով հագեցած բանաստեղծություններ:

«Գավառի Դուրյան» բնութագրումը պատահական չէր: Պեշկոթյուրյանը իր բանաստեղծական պատկերներով ու ապրումներով հաճախ շատ է մոտենում Դուրյանին: Իհարկե, նա ավելի զգույշ ու չափավոր է կյանքի ու աբարչի դեմ ուղղված իր խոսքերում, բայց նա էլ է ըմբոստանում: Դուրյանի պես Պեշկոթյուրյանն էլ ողբերգություն է ապրում նրա համար, որ այդքան երիտասարդ, ծաղիկ հասակում է հեռանում կյանքից, որ այլևս չի զգալու կյանքի գերագույն հաճույքները՝ չի նվազելու, չի բանաստեղծելու, ծաղկանց բույրը չի շնչելու և գարունների թովչանքը չի ըմբոշխնելու: Ափսոսանքի, կորստի, կարոտի սրտաճմլիկ և ցավագին արտահայտություն է նրա «Վերջալույսի խոհեր» արձակ քերթվածը:

«...Ծաղկեփթիթ կյանքս կը մերձենա իր վախճանին...», — գրում է բանաստեղծը: Եվ ո՞րն է ողբերգությունը.

«Ո՛հ, այլևս պիտի լուե դաշնակը, որ այնքան անույշ և սրտահույզ կը թնդար մատներուս ներքև: Այլևս պիտի դադարի գրիչս գրելե, բանաստեղծելե սրտիս խանդն ու հուրը, հոգվույս թախիծն ու հույզերը...»

Արդ, մնաք բարյավ, ով ակնապարար տեսարաններն աշխարհի, դուք ինձ համար այլևս տեղ ու հրապույր չունիք: Մնաք բարև արև, լուսին, աստղեր և դուն աշխարհ բերկրարար...»

Մնաք բարև գեղածիծաղ գարուն, գեղաթույր և գեղաբույր ծաղիկներ ու թռչուններ գեղեցիկ»⁶:

Դուրյանի պես նա մնաք բարովի խոսքեր է մրմնջում «աստված և արևին».

...

Թափե թերթերդ մեկիկ-մեկիկ, վարդենիս,
Քո բույր և թույր ալ շեն դյութեր իմ հոգին.
Փուշեղ ի զատ ոչինչ հրճվանք դու շունիս,
Խցցե ձեռներս, վշտեր արեամբ ամոքին:

...Եվ դու, գիշեր, բախե թևեր քո անլույս,
Ծածկե զամեն գեղ ու գեղգեղ ի սև շուր.
Թող չը վառվին ալ կուսին աչք, արշալույս,
Նա խոց, սա բոց, ծաղրեն իր վիշտ ու արտասուք':

Ահավոր ողբերգությամբ բաժանվեց կյանքից բանաստեղծը: Կյանքի վերջին պահերին էլ նա ապրում էր երգով ու երաժշտությամբ: Անկողնում

⁵ «Մասիս», 4. Պուլիս, 1892, էջ 200:

⁶ «Անդաստան», Փարիզ, 1969, № 18, էջ 74:

⁷ «Ծաղիկ», 4. Պուլիս, 1904, էջ 12:

հիվանդ պառկած ժամանակ նա «երգեհոներ իր քովը բերել տված էր,— պատմում է բանաստեղծ Ռուբեն Որբերյանը: —Վերջին անգամ ժամուկեսի չափ ես օգնեցի, և Գարեգին զարկավ երգեհոներ, մեկուն պես, որ այլ պիտի բաժանվի իր սիրեկանեն»⁸:

Երկար գամվեց անկողնուն բանաստեղծը: Ընկերները, կոլեջի դասախոսները մշտապես այցելում էին նրան: Իրենց հաճախակի այցերով նրա ծանր օրերն էին թեթևացնում Թլկատիներին, Զարդարյանը, Որբերյանը:

Մականյն թոքախտն իր գործը կատարեց: Հետո կոլեջը իր ծախսերով թաղեց նրան: Դա 1891 թ. հունիսին էր:

Այսքանն է միայն մեզ հայտնի մի երիտասարդի մասին, որ ուներ խոր հոգի ու զգայուն սիրտ, պոեզիան ու երաժշտությունն զգալու բացառիկ շրջանորհ. ստեղծագործողի տաղանդ, որը, Ռուբեն Զարդարյանի վկայությամբ, «շրջապատի հիացումին արժանացած» երիտասարդ էր:

Իր «Գերեզման» վերնագրով խոհի մեջ Պեշկետյանը գրում է. «Գերեզմանն արգելեց այնպիսի երիտասարդաց առաջադիմությունը, որոնք թերևս ողջ մնալով հասնեին զաղաթնակետն զարգացման և օգտակարության: Թերևս ավելի մեծ հանձար մը փայլեցնեին քան որ երբեք փայլած ըլլար...»⁹:

Այս խոսքերը կարելի է վերագրել նաև իրեն՝ Գարեգին Պեշկետյանին, որի համեստ տեղը մեր պոեզիայում անուրանալի է:

ДВА ПОЭТА

(К. Мкртчян, Г. Пешкетюрян)

В. А. ГАБРИЕЛЯН

(Резюме)

В истории западноармянской литературы 80-х годов XIX в. известны имена таких мастеров, как Тлкатинци и Мшо Гегам, деятельность которых протекала в провинции. В провинции жили и сделали свои первые шаги в поэзии также два одаренных поэта—Корюн Мкртчян (в Карине) и Гарегин Пешкетюрян (в Харберте). Они не успели проявить все свои возможности, так как умерли очень молодыми, но имеют свое скромное место в истории западноармянской литературе конца XIX в.

В статье даются литературные портреты К. Мкртчяна и Г. Пешкетюряна, говорится о жизни и творчестве этих двух безвременно ушедших поэтов.

⁸ Նույն տեղում, էջ 393:

⁹ «Անդաստան», Փարիզ, 1969, № 18, էջ 73: